Ինձ ամէնից աւելի հետաքրքրում էր Մարօն, որսորդի աղջիկը, ցանկանում էի նախքան տեսնելս նրա մասին որեւիցէ տեղեկութիւն ստանալ:

— Բայց Մարօ՞ն, — հարցրի ես:

— Մարո՞ն... — կրկնեց Սագօն մի առանձին ոգեւորութեամբ, — այժմ այդ սեւ դեւիկը իր թուխ աչքերով բոլորովին խելքից հանում է մարդուն...: Սատանա՜ն տանի նրան, էլի այնպէս կծում է... էլի այնպէս ճանկռտում է, որպէս առաջ...

— Նա միշտ կատոի բնաւորութիւն ունէր:

— Չգիտեմ ինչո՞ւ Սագօն ընկաւ խորին տրտմութեան մէջ, երբ Մարոյի անունը մէջ մտաւ: Նա վառեց իր ծխաքարշը, սկսեց ծխել: Յետոյ, երեւի, առաջին խօսակցութիւնը մոռացութեան տալու համար, առաջարկեց ինձ ծխաքարշը ասելով.

— Առ, ծխի՛ր այդ «սատանայի բուրվառը»:

Ես յայտնեցի, թէ ծխելու սովորութիւն չունեմ:

— «Ղարաչիների օբաներում ճգնաւորութիւն չեն անում»... — պատասխանեց նա ծիծաղելով:

Ես չհասկացայ, թէ ինչ էր ուզում ասել:

— Շատ հասկանալի է, — ասաց նա, — սոֆիները, որ սկզբում չեն ծխում, յետոյ սկսում են ծխախոտ ծամել. աւելացնում են դրա վրայ եւ աֆիոն ուտելը: Այսպէս է լինում ամէն պահեցողների վերջը:

Ես ընդունեցի նրա ձեռքից ծխաքարշը, ճշմարիտ, նա դուր եկաւ ինձ, թէեւ առաջին անգամն էր, որ ծխում էի:

— Հա՛, այդպէս, — ասաց նա մի առանձին հաճութեամբ, — օրինաւոր բան տեսար, մարդուն էլ է դուր գալիս, նրա ստեղծողին էլ:

Սագօն իր ծխաքարշը ընծայեց ինձ, ասելով թէ ինքը երկու հատ ունի, եւ խնդրեց, իջեւան հասնելու ժամանակ նրան յիշեցնեմ, որ ինձ ծխախոտ տայ: Նա հաւատացնում էր, որ առանց ծխախոտի, առանց արաղի ճանապարհորդութիւնը կեանք չունի: Այդ պատճառով, ես չդժուարացայ ընդունել նրա ձեռքից արաղի շիշը, որ մի փոքր խուրջինի մէջ դրած, քարշ էր տոել իր ձիու թամքի ղաշից: Թէեւ իմ կեանքում ամենեւին արաղ խմած չէի, բայց մի քանի կաթիլ կուլ տալով, շիշը ետ տոեցի. ինձ երեւաց, թէ բերանս կրակով այրեցին: Սագօն բաւական խմեց:

— Տաքացնում է, — ասաց նա, — այնտեղ, այն սարերի բարձրաւանդակների վրայ ցուրտ կը լինի: